№ 126 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28 1897 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28 № 126

ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարեկան 6 րուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Երեքշաբթի, հոկտեմբերի 28-ին,

ԳՐԻԳՈՐ ԻՎԱՆՈՎԻՉ ՄԵՂՎԻՆՈՎԻ

մահվան քառասունքին, ս. Նշան եկեղեցում կը մատուցվի պատարագ և կը կատարվի հոգեհանգիստ, որի մասին հանգուցեալի եղբայր Ալեքսանդր Իվանովիչ Մեղվինով և քոյրերը՝ Մարթա Իվանովնա Հախնազարեան և Սոֆիա Իվանովնա Տէր-Մինասեան յայտնում են ազգականներին և ծանօթներին: Պատարագի սկիզբը $10\frac{1}{2}$ ժամին առաւօտեան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կրետական հարցը լուծելու նոր միջոց.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Իրաւաբանական ժողովում. Փառքի տաճարում. Հայոց ներկայացումները Բաքւում. Նամակ Նոր-Նախիջևանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Երիտասարդ թիւրքեր. Գի դը Մոպասանի արձանը. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մելիքի աղջիկը:

ԿՐԵՏԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՆՈՐ ՄԻՋՈՑ

Այժմ, երբ յունաց շարժումը խեղդված է, գերմանական մամուլի մէջ արդէն ձայներ են լսվում կրետական շարժումն էլ վերջնականապէս խեղդելու մասին: Հիմք կայ կարծելու, որ այդ ձայները միմիայն գերմանական լրագիրների խմբագրութիւնների տրամադրութեան արտայայտութիւններ չեն, այլ մեծ մասամբ արձագանք այն հայեացքների, կամ աւելի ճիշդը՝ այն ձգտումների, որ տիրում է գերմանական կառավարութեան շրջաններում: Առաջին ձայնը բարձրացրեց իշխան Բիսմարկի օրգանը, „Hamburger Nachrichten", պահանջելով, որ „անգլիական ինտրիգներով" յարուցված հարցը մի կողմ դրվի, սուլթանին յանձնելով այդ անհանգիստ կղզու վերջնական խաղաղացումը:

«Ինչ օգուտ ունեց,—ասում է Բիսմարկի օրգանը,—պետութիւնների ստրատեգիական նաւատորմի երևալը Կրետէի ափերում. ինչ արեցին եւրոպական զօրախմբերը, որոնց ափ իջեցրին՝ Կրետէն խաղաղացնելու նպատակով... Խառնվելով ուրիշի գործերում, բաւականաչափ չը ծանօթանալով այդ գործերին, և պրկելով Թիւրքիան Կրետէն խաղաղացնելու խրատներից, եւրոպական դիպլոմատիան յանձն առաւ իր ուժերից բարձր մի պարտաւորութիւն, և դրանով լիութիւն տւեց Անգլիայի դիւանագէտներին, այն Անգլիային, որը նենգութեամբ հրապարակ հանեց եւրոպական միջամտութեան ծրագիրը, և այժմ էլ՝ յամառութեամբ հրապարակ է բերել կղզու ինքնավարութեան խնդիրը, իբրև նրա խաղաղացման ամենալաւ միջոց: Միամտաբար ականջ դնելով Անգլիայի խօսքերին, պետութիւնները դառն սխալ գործեցին.—նրանք զրկեցին Թիւրքիային հնարաւորութիւնից անելու այն, ինչ որ միայն նա կարող էր անել ամենաաջող կերպով.—բացի Յունաստանի դէմ վարած յաղթական պատերազմից, Բ. Դուռը կարողացաւ հէնց ընկճել, առանց մեծ աղմուկների, խեղդել հայկական ապստամբութիւնը, որ շատ և շատ յիշեցնում է կրետական շարժումը»:

Անտեսելով կրետական ինքնավարութեան, իբրև մի միջոցի, որը պէտք է հանդստութիւն հաստատի կղզու վրա, գերմանական պահպանողական լրագիրը չէ հաւատում ինքնավարութեան, յայտնելով, որ ինքնավարութիւնը կը ծառայի միմիայն Անգլիայի եսական շահերին, առիթ տալով այդ պետութեանը, ինքնավարութիւնից առաջացած անիշխանութեան վերջ տալու պատրուակով գրաւել կղզին: Գրաւման միտքը, ի հարկէ, սարսափ է ազդում Բիսմարկի հայրենակիցներին: Եւ ահա այդ մեծ վտանգի առաջն առնելու համար Բիսմարկի օրգանն առաջարկում է մի կողմ դնել կրետական ինքնավարութեան անմիտ գաղափարը, և ուղղակի Թիւրքիային յանձնել Կրետէի խաղաղացման գործը: Նա ասում է.

«...Հետևաբար անհրաժեշտ է հրաժարուել այնպիսի ուտօպիական ծրագիրներից, ինչպիսին է ավտօնօմիայի ծրագիրը, և առանց տատանւելու արձակել Թիւրքիայի ձեռքերը և միջոց տալ նրան խաղաղացնելու իր ապստամբ հպատակներին»:

Ուրիշ խօսքով՝ Գերմանիան, եթէ—միայն ընդունում ենք, որ Բիսմարկի օրգանի միջոցով արտայայտվում է գերմանական կառավարութեան գաղտնի հայեացքը,—առաջարկում է՝ մոռանալ ամբողջ տարվայ պատմութիւնը, յետ կանչել Կրետէից եւրոպական զօրքերը, և թոյլ տալ որ Թիւրքիան նորից ոտք դնէ արիւնաշաղախ կղզու վրա: Հետևանքը՞: Այդ շատ լաւ գիտեն Գերմանիայում: Եւ հէնց այդ հետևանքին էլ ձգտում են Թիւրքիայի քրիստոնեայ—ազգականները, հօհէնցօլէրնների տան քաղաքակիրթ հպատակները...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՐԱՒԱԲԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՄ

Շաբաթ, հոկտեմբերի 25-ին, երեկոյեան ժամի 8-ին կայացաւ իրաւաբանական ընկերութեան հերթական նիստը, որ պատւեցին իրանց ներկայութեամբ կառավարչապետ իշխան Գոլիցին և նրա օգնական գեներալ Ֆրեզէ:

Ընկերութեան անդամ, երդուեալ հաւատարմատար Ֆրենկէլ նիւթ էր ընտրել իր զեկուցման համար օրվան ամենալուրջ հարցերից մէկը—աւազակութիւնը Կովկասում: Այդ զեկուցումը խիստ չէր ներկայացնում մի լրացած ամբողջութիւն, այլ շարունակութիւնն էր մի ուրիշ զեկուցման—աւազակութիւնը առաջ բերող և նրան նպաստող պայմանների մասին—և ունենալու է շարունակութիւն, որի մէջ հեղինակը խօսելու է աւազակութիւնը վերացնելու միջոցների մասին: Այս զեկուցման մէջ պ. Ֆրենկէլ միմիայն պատմական հայեացք էր ձգում այն միջոցների վրա, որ կովկասեան վարչութիւնը ռուսաց տիրապետութիւնից առաջ և նրա տիրապետութեան օրով մինչև այժմ գործ է դրել կամ կամեցել է գործ դնել աւազակութիւնների դէմ:

Եթէ ի նկատի ունենանք, որ զեկուցումը գրված էր ճապաղ ոճով, աւելորդաբանութիւններով և նիւթի վերիվերոյ անալիզով, շատ բնական կը թւի մեզ, որ նա թոյլ տպաւորութիւն գործեց ժողովին ներկայ եղող բազմամարդ հասարակութեան վրա, թէև ունկնդիրները չէին կարող չը գնահատել այն համակրելի հայեացքները, որոնք արտայայտված էին այդ զեկուցման մէջ:

Շատ հետաքրքիր էր միայն զեկուցման այն մասը, որ վերաբերում էր մեր երկրի նախկին կառավարչապետ հանգուցեալ Դոնդուկով-Կորսակովի գործունէութեան, որչափով որ նա կապ է ունեցել աւազակութեան հարցի հետ: Ինչպէս յայտնի է, Դոնդուկով-Կորսակով համոզված էր որ, ընդհանուր օրէնքների և սովորական դատարանների վրա հիմնվելով, անկարելի է արմատախիլ անել այդ չարիքը. Նա առաջարկում էր արտակարգ միջոցներ և պահանջում էր արտասովոր լիազօրութիւններ: Բարձրագոյն իշխանութիւնը շատ անգամ չէր համաձայնում հանգուցեալ կառավարչապետի հետ, բայց երբեմն ընդունում էր նրա առաջարկութիւնները: Զեկուցողի կարծիքով, այն բոլոր արտակարգ միջոցները, որ գործ դրեց Դոնդուկով-Կորսակով, ոչ մի ցանկալի հետևանք չունեցան, իսկ այն միջոցները, որոնց գործ դնելու թոյլտւութիւն չը ստացաւ, ուղղակի վնասակար կը լինէին երկրի շահերին, որովհետև մեղանչում էին արդարութեան տարրական սկզբունքների դէմ:

Պ. Ֆրենկէլ անարդար է համարում չը բռնված աւազակի յանցանքների համար նրա ընտանիքի անդամներին, ազգականներին, նրա համագիւղացի պատասխանատու անձնաւորութիւններին կամ ամբողջ գիւղական հասարակութիւնը պատժելը, որովհետև դրանով խախտվում է արդարութեան այն հիմնական սկզբունքը, թէ ամեն մարդ պատասխանատու է միմիայն այն յանցանքի համար, որ ինքն է գործել, և անյարմար էր գտնում աւազակային գործերը ընդհանուր դատարանների իրաւասութիւնից հանելը և զինուորական դատարաններին յանձնելը, որովհետև նրա ասելով, այդպիսով ժողովրդի աչքում ընկնում է ընդհանուր դատարանների վարկը, մինչդեռ թէ ընդհանուր պետական շահերի և թէ յաջողապէս աւազակութեան դէմ մաքառելու աջողութեան տեսակէտից միանգամայն անհրաժեշտ է, որ ժողովուրդը ամենամեծ յարգանքով վերաբերվի դէպի սովորական դատարանները:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ

ԺԳ.

Աղբանոցի տնակը վաղուց էր մերկացել իր ամարային զարդերից: Բարձրահասակ վայրի բանջարները վաղուց էին չորացել և այժմ փտում էին հողի վրա, պատահարների կամքին թողնելով հինաւուրց օթեանի երկու կողերը և քայքայված մուտքը: Կանաչները գնացել էին: Երկու կաղնիները ջրի ձորում օր ու գիշեր թափում էին կանաչ-կարմիր տերևների կոյտեր, շտապում էին մերկացնել իրանց հսկայ ճիւղերը: Աշնանային քամին շրջապատի մեռելութեան մէջ միայն չոր շիւղեր, թափառական տերևներ էր գտնում իր ցաւալի, ողբաձայն շըշիւնները տարածելու համար. երբեմն էլ յարձակվում էր տնակի կտուրի վրա, դողդոջ էր գցում մեռած խոտերի մէջ, կարծես մրսեցնում էր ամենքին:

Այս անգամ փէրին սովորականից շատ երկար մնաց իր խղճուկ բնակարանում: Պատճառը միայն այն չէր, որ չոր ու տաք ամառվան յաջորդել էր պայծառ ու մեղմ աշունը, երբ պարզ երկինքը երկար հիացնում է ամբողջ աշխարհը իր քաղցրիկ արևով: Կար և մի այլ պատճառ: Այժմ նա ինքնագլուխ չէր, այժմ նա կատարում էր մէկի պատուէրները: Նա յաճախ ճանապարհորդութիւններ էր կատարում դէպի շըրջակայ գիւղերը և ամեն վերադարձին գնում էր մելիքի տունը:

Վերջին ճանապարհորդութիւնը մի ամբողջ շաբաթ տևեց: Աւետարանոցից նա դուրս գնաց Մարթայի և Նազլուի հետ, ուղևորվեց դէպի արևմուտք: Այժմ թէ պառաւը և թէ նրա երկու ընկերակիցները անգործ մուրացկանների տեսք չունէին: Նոյն իսկ Մարթան քայլում էր կայտառ, կարծես հասկանում էր, որ գործը այդպէս է պահանջում:

Դարձեալ տխուր և կատաղի էր Նազլուն: Զարդված սրտերի ամենալաւ բուժիչը առհասարակ ժամանակն է համարվում. բայց այդպէս է նա այն դէպքում, երբ դաժան բախտը ձեռք է վերցնում իր զոհից: Իսկ Նազլուի ճակատին գըրված էր միշտ լինել անողոք թշուառութեան ճանկերի մէջ:

Երկու շաբաթ առաջ Սուլէյման-բէկի բանտից մի դիակ հանեցին, դա ծերունի Ապրեմն էր, Նազլուի նշանածի հայրը: Թիւրքի արդարադատութիւնը պատրաստվում էր պատժել այդ մարդուն, որովհետև նա չէր արգելել իր որդուն վազել իր հարսնացուի օգնութեան: Նա, ինչպէս տեսանք, Նազլուի մօր, Մարիամի, մեղսակիցն էր: Բանտի տանջանքներից նրան ազատեց մահը: Իսկ Մարիամը: Դիակի հետ բանտից մի շշուկ դուրս եկաւ, որ սկսեց պտտել ու պատմել թէ Մարիամը չը կայ: Ո՞ւր էր կորել, ինչ էր եղել—դա բանտի գաղտնիքն էր: Գուցէ նրան էլ ազատել էր մահը, գուցէ և կենդանի է, բայց հեռացրված է այս կողմերից: Վերջին ենթադրութիւնը անհաւանական չէր, քանի որ Մարիամը դեռ ջահել էր, նոյն իսկ գեղեցիկ:

Իզուր Նազլուն ամեն օր գնում էր բէկի դուռը և ամեն մի պատահածից պահանջում էր ասել թէ ուր է իր մայրը: Նրա կատաղութիւնը ոչ ոքին չէր զայրացնում, որովհետև ամբողջ գիւղը անուանում էր նրան խենթ աղջիկ: Միայն տանուտէր Ահմէդը, որ մի առանձին հաճութիւն ունէր դէպի խենթերը, խօսում էր նրա հետ, մեծ բաւականութեամբ ծիծաղում էր, մինչև անգամ մատի ծայրը դիպցնում էր նրա ուսին և կրկնում իր սովորական խօսքերը.

—Ինձ մնրաչի Ահմէդ կասեն...

Մի-մի բարեհոգի թիւրքը մեկնում էր իր ձեռքը դէպի հիւսիս, խաղացնում էր մատները, հասկացնելով թէ շատ հեռու տեղ է իր ցոյց տուածը և աւելացնում էր.

—Այնտեղ է... նրան չես տեսնի:

Նազլուն չէր հաւատում և յուսահատութիւնից կատաղած՝ բարձրացնում էր իր բռունցքը, ասում էր, սպառնալով Ահմէդին.

—Ես քո հոգին կը հանեմ...

Տանուտէրը աւելի մեծ ախորժակով էր ծիծաղում, աւելի լայն էր բաց անում իր բերանը, այնպէս որ պսպղում էին նրա բոլոր ձիւնափայլ ատամները:

Այս տեսարանը ճշտութեամբ կրկնվեց և այժմ, երբ փէրին ու Նազլուն հասան աղբիւրին: Ահմէդը, որ նստած էր քարի վրա, կանչեց նրանց: Տանուտէրը այժմ մենակ չէր. նրա կողքին կանգնած էր Քէօսա-Մուխտարը:

—Արի, արի, ասաց Ահմէդը՝ նոյն երջանիկ ժպիտը բերանին—չես ուզում քո մօր մօտ գնալ:

Աղջիկը կանգ առաւ, իսկ տանուտէրը, ցոյց տալով իր ընկերին, աւելացրեց.

—Սա է տարել քո մօրը, սա քեզ էլ կը տանէ...

Եւ էլի ծիծաղեց: Այդ ծիծաղը սաստիկ խաբում էր Նազլուին, թոյլ չը տալով հասկանալ թէ որն է կատակը և որն է իրողութիւնը: Այս անգամ նրա մէջ կասկած չը մնաց, որ Ահմէդը կատակ է անում: Անկարելի էր, որ նրա մօտ կանգնած այլանդակ մարդը լինէր իր մօր տանողը: Եւ նա շարունակեց իր ճանապարհը, ուշադրութիւն չը դարձնելով Քէօսա-Մուխտարի վրա, որ նոյնպէս չարժանացրեց նրան իր ուշադրութեան:

Բայց այդպէս չէր Նազլուն մի շաբաթից յետոյ, վերադարձի ժամանակ: Նա և փէրին շըրջապատված էին մի ամբոխով, մի սարսափելի բազմութեամբ: Եւ այժմ նա հասկանում էր տանուտէր Ահմէդի խօսքերը, գիտէր որ դրանց մէջ կատակ շատ քիչ կար. հասկանում էր մանաւանդ թէ ինչ է եղել տանուտէրի այլանդակ ընկերը: Եթէ երկուսը, Ահմէդը և այն չորացած դէմը, այժմ էլ նստած լինէին աղբիւրի մօտ, Նազլուն ուրիշ կերպ կը խօսէր: Բայց ոչ ոք չէր երևում այդտեղ, ոչ ոքին նա բան չասաց և ուղիղ գնաց դէպի աղբանոցի ձորը: Այդ օրը հինաւուրց տունը օթեան տուեց շատ դժբախտների:

Դա աշնանային մռայլ օրերից մէկն էր: Առաւօտեանից երկինքը պատած էր գորշ ամպերով. սարերի վրա ձգվել էր մշուշի մի անհուն ծով: Մառախլապատ, անլոյս օրվայ խոնաւութիւնը նստել էր ամեն տեղ. իսկ ցուրտ քամին թէև շատ մեղմ էր, բայց սաստկացնում էր այդ խոնաւութիւնը և փայտացնում էր մարդու քիթն ու պռունգը: Չը նայած այդպիսի եղանակին, Աւետարանոցը մի առանձին կենդանութիւն էր ստացել. Նա դուրս էր թափվել և տեղաւորվել էր կտուրների վրա, ցանկապատների ետևում: Շըրջակայ գիւղերից գալիս էին խումբ խումբ գիւղացիներ. դըրանց քշում բերում էին Սուլէյման-բէկի ձիաւորները: Մարդկանց կոյտերը խառնում էին մաինչ վերաբերում է ժողովրդին զինաթափ անելուն, զեկուցանողը այդ միջոցը շատ նպատակայարմար էր համարում միայն այն պայմանով, որ ժողովուրդը զինաթափ անվի միաժամանակ և ոչ թէ մաս-մաս, և յետոյ կատարելագործված զէնք բաժանվի գիւղերում ընտրված պահապաններին, որպէս զի նրանք կարողանան պաշտպանել գիւղացիներին աւազակների յարձակումներից:

Զեկուցման վերջում պ. Ֆրենկէլ դուրս եկաւ իր ընտրած նիւթի սահմաններից և հարևանցի խօսելով աւազակութեան պատճառների և նրան արմատախիլ անելու միջոցների մասին, այն միտքը յայտնեց ի միջի այլոց, որ աւազակութեան արմատները սնուցանող տարրերից մէկը տգիտութիւնն է և աւազակութիւնը չի վերջանայ, մինչև որ կրթութիւնը չը տարածվի տգէտ մահմեդական ամբոխի մէջ:

Զեկուցումը առիթ տուեց հետաքրքիր վիճաբանութեան: Առաջինը խօսեց պրոկուրորի օգնական Կրասօվսկի: Նա ասաց մօտաւորապէս հետևեալը:

—Ես լաւ չը հասկացայ պ. զեկուցանողի վերջին խօսքերը, որոնք իրանց մէջ պարունակում էին այնպիսի ինքն ըստ ինքեան լաւ մտքեր, ինչպէս կրթութեան տարածման օգտակարութիւնը. չը հասկացայ, որովհետև այդ խօսքերը շատ մշուշապատ էին: Լաւ բաներ շատ կարելի է առաջարկել, բայց մեզ այս րոպէիս պէտք են այնպիսի միջոցներ, որոնք կարճ ժամանակում վերջ տան այն չարիքին, որ ահագին չափեր է ստացել այս երկրում: Յոյս դնել տգէտ ամբոխի լուսաւորվելու վրա, կը նշանակէ սպասել շատ երկար տարիներ: Բացի այդ ես չեմ հասկանում, թէ ինչու է դէմ պ. զեկուցանողը աւազակային աչքի ընկնող գործերը զինուորական դատարանին յանձնելուն: Այդ անվում է, ոչ թէ ընդհանուր դատարանների վարկը գցելու նպատակով, այլ այն պարզ պատճառով, որ զինուորական դատարանը աւազակութեան դէմ կռուելու համար ունի իր ձեռքին այնպիսի միջոց, որից զուրկ են ընդհանուր դատարանները: Աւազակութիւնը ընդհանուր օրէնքների հիման վրա կարող է պատժվել միայն Սիբիր աքսորելով, մինչդեռ զինուորական դատարանը կարող է մահուան դատապարտել աւազակին: Ինչ կը նշանակի այժմ Սիբիր աքսորել, այդ բոլորիս յայտնի է: Այժմ Սիբիրից չէ փախչում միայն ծոյլը: Ինչ նպատակի կարելի է հասնել այդպիսի մի պատժով, մինչդեռ մահվան պատժով զինուորական դատարանը հասնում է իր նպատակին, այն է միանգամայն հեռացնել արատաւոր անդամին այն հասարակութիւնից, որի շահերին նա վնասում է: Ես սկզբունքով մահվան պատժի կուսակից չեմ, բայց երբ հնարք չը կայ աւազակներից ազատվելու, պէտք է դիմել այդ միջոցին:—Ինչ վերաբերում է խմբային պատասխանատուութեան, ես նոյնպէս չեմ կարող համաձայնվել պ. զեկուցանողի յայտնած կարծիքի հետ: Ճիշդ է, ամեն մարդ պատասխանատու է միայն այն յանցանքի համար, որ նա ինքն է գործել, բայց ինչ անենք այն գիւղացիների հետ, որոնք ճանաչում են աւազակներին, ապաստան են տալիս նրանց իրանց տանը. միթէ թողնենք նրանց անպատիժ. իսկ եթէ համաձայն էք, որ պէտք է պատժել նրանց, միթէ յայտնի չէ, որ Կովկասում աւազակների ծննդավայր գիւղերի գրեթէ բոլոր բնակիչները յարաբերութիւն են ունենում աւազակների հետ և պաշտպանութիւն ցոյց տալիս նրանց: Դրանց մեղսակցութիւնը ապացուցանել դժուար է և պէտք է թողնել, որ նրանց զսպի խմբային պատիժներով ադմինիստրացիան, որ չէ կաշկանդված օրէնքի և դատավարութեան ձևականութիւններով, ինչպէս դատարանը: Ես վերջացրի:

Այնուհետև խօսք տրվեց զինուորական դատաւոր գնդապետ Իվանենկօյին, որի ճառը մեծ տպաւորութիւն գործեց ամբողջ հասարակութեան վրա և վարձատրվեց աղմկալի ծափահարութիւններով: Այդ ճառի և միւս խօսողների մասին հետևեալ անգամ:

(Կը շարունակվի)

ՓԱՌՔԻ ՏԱՃԱՐՈՒՄ

(Պատկերահանդէս)

> Գեղարուեստական երկեր ստեղծագործելու համար կայ միայն մի պայման, որ ցոյց է տուել մեծն Գեօթէ. „Լցրէք ձեր միտքը և ձեր սիրտը, ինչքան էլ ընդարձակ լինեն նրանք,“ ձեր ժամանակի գաղափարներով և զգացմունքներով և երկը կը ստեղծվի:
> Տէն

(Շարունակութիւն)

—

Այդ տեսակէտից ցուցահանդէսում, եթէ մեր ճաշակը չէ սխալեցնում մեզ, յաջող են միայն, այն էլ մասամբ, Բաշինջաղեանի «Կուրը գիշեր ժամանակ Օրթաճալայի կողմից» (№ 65) և «Սևանայ լիճը» (№ 84) և Զանկօվսկու «Արարատը» (№ 19): Առհասարակ, մեզ թւում է, որ պ. Բաշինջաղեան այս ցուցահանդէսում իր տաղանդից ցած է: Գովելի է, ի հարկէ, նրա աշխատասիրութիւնը,—22 պատառ է հանդէս դրել նա այս անգամ,—բայց, մեր կարծիքով, գեղարուեստի մէջ միշտ պէտք է հետևել լատինական առածին՝—non multa, sed multum:

Մեզ դուր չէ գալիս պ. Բաշինջաղեանի մէջ այն, ինչ որ կոչվում է սեթևեթանք (манерность): Յարգելի նկարիչը մի տեսակ հակումն ունի զուքել, կոկել և սրբել բնութիւնը: Տաղանդին վայել չէ բժախնդիր գուվերնանտի դեր կատարել բնաւորութիւնների և բնութեան վերաբերմամբ: Բնութիւնը bon ton չէ ընդունում, թէև գեղարուեստն էլ միւս կողմից չէ սիրում կեղտոտ գոյներ, այլանդակ դիմագծեր, անճոռնի մարմիններ, եթէ դրանք միանգամայն անհրաժեշտ չեն մի որ և է գաղափար արտայայտելու համար: Ի՞նչ անհրաժեշտութիւն կայ, օրինակ, գործածելու Շմերլինգի սիրած դժգոյն ներկերը, որոնք ձեր երևակայութիւնը տանում են մշտական ծխի և մշտական փոշու երկիրը՝ Բագու, ուր ամեն գոյն բարդվում է մոխրի գոյնով: Գեղարուեստի ո՞ր կանօնն է պահանջում, որ Բաթումի նաւահանգիստը, Սև ծովի այդ գեղեցիկ անկիւններից մէկը, պատկերացվի Բագուի նաւահանգստի ջրի գոյներով: Կամ վերցրէք, օրինակ, Շուլցի «Սկսնակը» (Дебютантка № 135). ինչի համար է այդ նկարում ցոյց տրված աջակողմեան օրիորդի տգեղ, կիսամերկ մարմինը, կամ դրան մօտ կռացած պառաւի մէջքը: Շատ բանից կարող է զուրկ լինել շնորհալի նկարիչը, բայց ճաշակից՝ երբէք:

Մինչև այժմ առիթ չունեցանք խօսելու երկու հայ նկարիչների՝ պ.պ. Նշանեանի և Յակոբեանի մասին, որոնք լցրել են ցուցահանդէսը պատկերներով, էտիւդներով և էսկիզներով և նոյնպէս հայ նկարիչ Փիրադեանի մասին, որ հանդէս է դրել 4 տիպ: Նշանեան անշուշտ շնորհալի կենդանագրող է: Նրա նկարած գրեթէ բոլոր դէմքերը արտայայտութիւն ունեն: Գեղեցիկ են մանաւանդ «Հայի գլուխ» (№ 30), «Վիճակ գուշակող արաբ կին» (№ 82, լաւ է ոչ թէ ինքը վիճակ գուշակողը, այլ այն կինը, որի վիճակն է գուշակում): Ճաշակի դէմ մեղանչում են՝ № 110 էտիւդը, որ ներկայացնում է կնոջ տգեղ մարմին կիսամերկ և № 117, մի վուլգար դէմքով կնոջ կենդանագիր:—Մի բան, որ անպայման չէ աջողում Նշանեանին՝ այդ մարդուս մարմինն է —անբնական նստուածք, անհամաչափութիւն մարմնի մասերի մէջ, կարծես փայտից շինած ձեռքեր ու ոտներ (տեսէք, օրինակ, № 89 «Աղօթք» նկարը, որտեղ աղօթողի գլուխը լաւ է դուրս բերած, բայց ձեռքերը շան սատկած թաթեր են յիշեցնում): Յակոբեանի անթիւ նկարներից փոքր ի շատէ աջող են № 76, № 100 և № 158 («Քիւրդ»): Փիրադեանի 4 նկարից աջող է «Թիֆլիսի քաղաքացին» (№ 2):

Վերջացնելով մեր խօսքը կովկասեան նկարիչների մասին, չենք կարող չը յիշել, որ Գաբաեվի նկարները մեզ դուր չեկան: Նրա «Լուացք անողների» մէջ (№ 35), լաւ է միայն նկարի յետին պլանը, ուր գետի ափերը փորձված նկարչի շնորք են ցոյց տալիս. առաջին պլանը ամբողջապէս, լուացք անողներով, նրանց գրաստներով և գետով, թոյլ է՝ մեր կարծիքով: «Սամարկանդի բազարը» (№ 106), որքան լաւ մտածած է, այնքան վատ կատարված է: Ամբողջ նկարի մէջ տիրապետում են անբնական, դժգոյն երանգներ և ռելիեֆի, օդի և լոյսի բացակայութիւն:

Սիրողների բաժնում ուշադրութեան արժանի են Մարտիրոսեանի նկարները (№ 232 և 233), իբրև փոքր ի շատէ աջող, և Մօզցիլիձէի նկարները (№ 234—236), իբրև միանգամայն անաջող փորձեր:—Զիկալինան աչքի է ընկնում իր ընդունակութեամբ՝ ըմբռնել ու վերարտադրել դէմքերի արտայայտութիւնները և անճոռնացնել մարմինները, որ նա շատ սիրում է ներկայացնել մերկ կամ կիսամերկ: Մեզ անհաւատալի է թւում, որ որ և է գեղարուեստական դպրոցում այնպիսի տգեղ ու վատուժ մարմին ունեցող տիպարներ ընտրեն, ինչպէս այդ կարելի է կարծել հիմնվելով Զիկալինայի նկարների վրա:

Արձանների միջից արժանի են այդ անունը կրելու միայն Խօզօրօվիչի պատրաստածները, որոնցից աչքի են ընկնում «Պանթեոն գնացող վրացին» (№ 181, լաւ է վերարտադրված ինքը վրացին իր ձիով. նրա առաջ կանգնած վրացի կինը կարծէք մանրէկէն լինի), «Բռստանական թռչունների ուլունը» (№ 182), «Կաղակը անձրևի տակ» (№ 205) և երեք կիսարձաններ (№№ 212, 214 և 216): Հակագեղարուեստական է № 184 էսքիզների մէջ՝ համբուրվող միանգամայն մերկ մարդ ու կնոջ ներկայացրած սիրային տեսարանը. հին յոյները սիրում էին, ճիշդ է, քանդակել միանգամայն մերկ մարդկանց արձաններ, բայց, որքան մենք գիտենք, նրանք երբէք չէին ներկայացնում այդ արձանները էրօտիկական վայրկեաններում և յամենայն դէպս ծանրութեան կենտրօնը դնում էին մարմնի գեղեցկութեան մէջ, որի ֆիզիօլոգիական կողմի տպաւորութիւնը ինքն ըստ ինքեան մեղմանում էր գլխի անբիբ աչքերի կիսակենդան արտայայտութեամբ:

Բացի կովկասեան գեղարուեստագէտներից, ցուցահանդէսին այս անգամ մասնակցում են երկու պետերբուրգցի նկարիչներ—Էյմնէր և Պախօմօվ, որոնք երկուսով նոյնքան նկարներ են հանդէս դրել, որքան բոլոր 12 կովկասեան նկարիչները միասին: Էյմնէր շնորհալի կենդանագրող է. նրան աջողվել են մանաւանդ մալօրօսեան տիպերը: Մեզ դուր եկաւ նոյնպէս և «Օֆէլիան Էլսինօրում» (№ 124, ածխանկարը): Ինչ վերաբերում է Պախօմօվին, նրա նկարները յիշեցնում են մեզ այն ասացուածքը, թէ բժիշկներն իրանց սխալները թաղում են, իսկ նկարիչները՝ հանդէս են դնում:

Տ. Ց.

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ԲԱԳՈՒՈՒՄ

—

Հոկտեմբերի 24-ին

Այսօր, Բագուի նորակազմ դերասանական խումբը տուեց իր IV ներկայացումը: Խաղացին Զուդերմանի «Պատիւ» դրաման: Պիէսը լի է բեմական արժանաւորութիւններով և ունի հետաքրքիր հոգեբանական վայրկեաններ: Զուդերման ուզում է ցոյց տալ, թէ ինչ կերպարանք է ընդունում պատւի գաղափարը ժամանակակից հասարակութեան մէջ. իսկ բուն նպատակն է մի կողմից պարզել, թէ որքան պատւի զգացմունքը սկսում է հակասել իր էութեան, երբ դառնում է դասակարգային, իսկ միւս կողմից՝ չը նայելով ամբոխի (առանց դասակարգերի խտրութեան) տրամադրութեան՝ մարդկային այդ վեհ արժանաւորութիւնը դարձնել լոկ ձևականութիւն, ժամանակակից սերունդը կենսունակ է արտադրելու այնպիսի անհատներ, որոնք կեանքի գնով պատրաստ են բարձր պահել մարդուն կենդանիներից զատող լաւագոյն յատկութիւններից մէկը,—պատիւը: Այդ տեսակէտից պիէսը չօշափում է համարեա բոլոր դասակարգերը և հետևցնում է, որ կրթութիւնը, տնտեսական ապահով վիճակը, դասակարգային առաւելութիւնը դեռ գրաւական չեն իսկական պատւի գաղափարի գոյութեան, որ վերջինս բաժին է, մարդկային միւս առաւելութիւնների հետ՝ մի-

---

Նաւանդ բէկի տան մօտ, իսկ մելիքի տան հիւսիսային կողմում՝ բարձր թումբի լանջերը սևացել էին մարդկանց բազմութիւնից: Ամենքը սպասում էին. ամենքի աչքերը ուղղված էին դէպի բէկի տան մօտ եղած լայնարձակ հրապարակը, որի մէջտեղում տնկված էր մի բարձր, սրածայր և հաստ ձող:

Մարդակեր բարբարոսութեան այն ժամանակներում երեխան էլ գիտէր, որ շուտով հրապարակի մէջ մի մարդ կը հանվի ցցի վրա: Դա ամենադարհուրելին էր սպանութեան բոլոր եղանակների մէջ, որ մարդը հնարել է մարդու համար, ուստի և շատ յաճախ չէր գործադրվում: Ամենքը հասկանում էին, որ պատժվողը մի շատ նշանաւոր ոճրագործ պիտի լինէր: Ասում էին որ բէկին, վերջապէս, աջողվել էր ձեռք գցել Մանասի մարդկանցից մէկին և այժմ դրա վրա պիտի թափէր իր ամբողջ կատաղութիւնը: Նա հաւաքել էր այսքան բազմութիւն, որ ցոյց տայ թէ ինչպէս ինքը գիտէ պատժել. մինչև անգամ հրաւէրներ էր ուղարկել Մելիք-Աւանին, մի քանի քուրդ ու թուրք բէկերի: Միայն հայ մելիքն էր անտես արել իրան հասած հրաւէրը:

Բայց ամբոխը մի առանձին տագնապի մէջ չէր: Անհոգի, ցուրտ մի զանգուած էր նա և մինչև անգամ անհամբերութեան նշաններ էր ցոյց տալիս: Լուր էր պտտում, որ ցցի հանվողը թէև Մանասի մարդկանցից է, բայց անյայտ օտարական է, վարանդեցի չէ, եկել է մի հեռու տեղից: Օտարը օտարին կարեկից չէ. այս անողորմ օրէնքը այժմ ամբոխի մխիթարութիւնն էր. գոնէ իմանում էին, որ սպանվողը օտար է, ուրեմն կարելի էր նայել առանց ցաւակցութեան, առանց լացի, նայել այնպէս, ինչպէս փողոցում հաւաքվածները դիտում են թէ ինչպէս ընկած ձին կամ եզը փչում է վերջին շունչը:

Ժամանակն անցնում էր, իսկ սպասողների համբերութիւնը գնալով սպառվում էր: Լեռնային քմահաճ բնութիւնը սկսեց մի քանի զարմանալի փոփոխութիւններ. մշուշը չքացաւ լեռների վրա, երկնքի ամպերը յանկարծ ծուէն-ծուէն դարձան և արեգակը մի քանի տեղ ճառագայթներ թափեց խոնաւ ու սառած երկրի վրա: Կարծես հէնց դրան էր սպասում Սիւլէյման-բէկը: Նա դուրս եկաւ տանից, ծալապատիկ նստեց գորգերի վրա առանձին պատրաստած տեղը, իսկ նրա շուրջը բազմեցին պատուաւոր հիւրերը: Ամեն տեղ տիրեց մեռելային լռութիւն. մարդիկ չէին համարձակվում նոյն իսկ շունչ քաշել:

Բէկը կարգադրութիւններ արաւ, բայց այսօր նա չափից դուրս դանդաղկոտ էր, կարծես վճռել էր անհամբերութիւնից ճաքեցնել այդքան մարդկանց: Նրա թիկնապահներից մի քանիսը դէս ու դէն վազեցին, նորից վերադարձան և ինչ որ բան ասացին: Անցան ծանր րոպէներ:

—Բերում են, վերջապէս լսվեց մի խեղդված շշուկ, որ սկսեց ալիքների նման ման գալ նայողների կոյտերում:

Գիւղացիների ծովը երերաց, ամեն մէկն աշխատում էր յարմար տեղ բռնել: Տան ետևից մի քանի մարդիկ երևացին և անհամար աչքերը վերջապէս տեսան յանցաւորին: Նա չէր քայլում, այլ քարշ էր ընկնում ծնկների վրա, որովհետև նրա աջ ոտը բոլորովին չէր գործում: Առջևից գնացողը ձգում էր նրա վզին կապած շղթան և նա զարհուրելի ջանքեր էր գործ դնում, որ կարողանայ աւելի արագ շարժվել: Մեռելային գունատութիւնը նստել էր նրա դէմքին, որի վրա երևում էր մի նօսր մօրուք: Դեռ տեղ չը հասած՝ նա արդէն մեռած էր, կարծես նրան դուրս էին քաշել մահվան անկողնից:

Այդ հանգամանքը զարմանք պատճառեց հանդիսատես հիւրերին. հիասթափումը ընդհանուր էր:

—Սա մեռնելու վրա է, ասացին մի քանիսները:

—Ցցի ծայրին չի հասնի, կէս ճանապարհին հոգին կը տայ:

Կալանաւորը կարծես խիստ դժգոհ էր այդ վկայութիւններից: Բարձրացնելով իր գլուխը, նա նայեց չորս կողմին, տեսաւ ահագին բազմութիւնը և յետոյ ընդունելով արհամարհող մարդու հպարտ դիրքը, ասաց, աչքերը բևեռած բէկի վրա.

—Հանգիստ եղիր, ես չեմ խանգարի այս մեծ հանդէսը… իմ մէջ դեռ այնքան ոյժ կայ, որ կարող եմ մինչև երեկոյ մնալ ձողի գլխին:

Նա հասաւ իր նպատակին, հասկացնելով որ սպանութեան հանդէսը կորցնում է իր նշանակութեան մեծ մասը: Ամենաանգութ չարագործները անգամ այսքան հանդարտ ու անտարբեր չէին այս տեսակ մահվան առաջ: Նոյն իսկ այնպիսի գազաններ, որոնց համար մարդասպանութիւնը զւարճութիւն էր, դողում էին ցցի դիմաց. շատերը այնքան թուլանում էին, որ սկըսում էին գթութիւն հայցել, իսկ շատերը այնքան զայրանում էին, որ կատաղած այս ու այն կողմն էին ընկնում, հայհոյանքներ էին թափում ամենքի վրա: Թէ աղաչանքները և թէ կատաղութիւնը, սակայն, մի և նոյն միտքն էին յայտնում. նրանք հաւասար չափով ցոյց էին տալիս նայողներին թէ որքան սոսկալի բան է ձողի գլխին սպասող մահը: Իսկ այս ջարդված, կիսամեռ մարդը գոնէ մի հատ ցնցումով չը յայտնեց թէ իր մէջ էլ կայ երկիւղ. նա արհամարհում էր ամեն ինչ. նրանից երկու քայլ հեռու գտնվող ձողը ոչինչ տպաւորութիւն չէր գործում նրա վրա: Նոյն իսկ նրա վզին անցկացրած շղթան բոլորովին աւելորդ էր, չէր ցոյց տալիս թէ զսպում է այդ մարդու մէջ որ և է կիրք:

Սիւլէյման-բէկը, սակայն, ուշադրութիւն չը դարձրեց այդ արհամարհանքի վրա: Նա մի սարսափելի ձայնով ասաց, ցոյց տալով ձողի ծայրը:

—Այնտեղից քո մարմինը կընկնի քեզ պէս պիղծ շների առաջ. քո մի հատ ոսկորն էլ չի ազատվի շների բերանից:

Այդ սպառնալիքը ազդեցութիւն չարաւ: Դատապարտվածի գունատ դէմքը քարացածի էր նման և երևան չը հանեց ամենաթեթև ջղաձգութիւն անգամ:

—Եթէ աղաչես, ես քեզ մի ողորմութիւն կանեմ,—շարունակեց Սիւլէյման բէկը.—ձողի վրա քո երեսը դարձրած կը լինի դէպի եկեղեցին, ուր դու հագնում էիր ծաղրածուի շորեր և ծէսեր էիր կատարում: Գուցէ քո պիղծ հաւատի մեծերը գան և ազատեն քեզ իմ ձեռքից: Ուզում ես, անհաւատ շուն:

Անպատասխան մնաց և այդ հայհոյանքը, որ արտասանվեց կարծես միայն այն մտքով, որ շրջապատողները հասկանան թէ սպանվողը եկեղեցու պաշտօնեայ է:

(Կը շարունակվի)

այն սահմանափակ թիւ անձինքների, որոնք պատահում են անխտիր բոլոր խաղերի մէջ:

Զուդերման խելացի է և իր խելքովը հասցրել է այն աստիճանին, որ չէ բաւականանում առաքինութեան ներքին յաղթութեամբ, այլ նա այդ աջողեցնում է և իրական պայմանների մէջ, այսպէս ասած՝ նիւթապէս... Նրա հերոսը չէ ընկճվում բարոյապէս, մինչև վերջը գլուխը բարձր է պահում և վերջ ի վերջոյ հասնում է ամենանախանձելի դրութեան. նա, չը նայելով բոլոր խոչընդոտներին, միանում է իր սիրած աղջկայ հետ, որը, չը մոռանանք ասել, իրան պէս առաքինի է. այդ բաւական չէ, դառնում է ժառանգ անհաշւելի հարստութեան՝ միլիօնների, այն էլ կողմնակի կերպով, օտար մի մարդուց, որը գրաւած Րօբէրտով, իր հարստութիւնը կտակում է նրան: Առաքինութիւնը պարգևատրված սիրած աղջկանով և միլիօնով,—աւելի ինչ ցանկալի կարող է լինել: Առաքինութեան համար տանջվող ոգին, որի ճակատին դեռ մնում է փշեայ պսակը, կարող էր ասել Զուդերմանին՝—вашими устами медъ бы пить: իսկ օթեակներում բազմած բազուցինները գուցէ մտածում էին. «Ուրեմն աշխարհում կարող են այսպիսի բաներ պատահել...»:

«Պատւի» բովանդակութիւնը չենք պատմի, քանի որ նա լաւ ծանօթ է ընթերցողներին: Զուդերմանի պիէսան գրված է բեմի համար և շատ կենդանի է անցնում: Ցարաբաղդաբար, Բագուի հայ հասարակութիւնը սառն էր վերաբերվել դէպի այս հետաքրքիր պիէսի ներկայացումը: Ի՞նչն է պատճառը, որ մի քանի ներկայացումներից յետոյ թատրօն յաճախողների թիւը սկսել է նըւազել: Արդեօ՞ք հասարակութեան պահանջները այնքան նրբացել են, որ խումբը այլ ևս բաւականութիւն չէ տալիս: Դրան կարելի է պատասխանել, որ խմբի խաղը ընդհանրապէս տանելի էր: Բայց որ Բագուի հասարակութեան ճաշակը այնքան էլ նախանձելի աստիճանի չէ հասած, դրա մասին ոչ ոք չի վիճի: Հետևաբար ինչով պէտք է բացատրել նկատվող սառնութիւնը: Պատասխանն ամեն տեղ մի և նոյնն է. գեղարուեստական ճաշակը մեզանում դեռ թոյլ է և դրա պատճառով մեր հետաքրքրութիւնը դէպի թատրօնը տևողական չէ: Միմեանց նայելով մի առժամանակ կը սկսեն թատրօն այցելել և նոյն հօտային կերպով անհետանալ: Այդ նըկատվել է և ամենալաւ խմբերի ժամանակ:

Գանք դերասանների խաղին: Պիէսի ամենագլխաւոր դերն է՝ Րօբէրտի դերը, որ կատարեց պ. Օհանեան: Նա ծանր խնդիր ունէր իր առաջ: Նկատվում էր, որ դերասանը վերաբերվել էր դէպի իր դերը ամենայն բարեխղճութեամբ, բայց խաղն անցաւ միջակ և երբեմն թոյլ: Շատ հազիւ եղան վայրկեաններ, երբ դերասանին աջողվեց արտայայտել հոգեկան յուզմունքները համապատասխան զօրութեամբ: Պարզ է, որ առաջին-սիրողի դերի համար Օհանեան անպատրաստ է: Դժուար է մինչև անգամ ենթադրութիւններ անել, թէ ինչպէս կընթանան նրա ընդունակութիւնները: Շատ բան կախված է, ի հարկէ, դերասանից: Դա մի արհեստ է, որն անվերջ կարելի է կատարելագործել: Մեր փորձված և ընդունակ դերասանները՝ Աբէլեան, Պետրոսեան և Վրոյր աջող էին իրանց խաղի մէջ. պ. Պետրոսեանի խաղի մէջ նկատվում է լուրջ չկօլայի ազդեցութիւն: Պէտք է յուսալ, որ այդ կողմից նա բարերար ազդեցութիւն կունենայ խմբի վրա: Պ. Աբէլեանի համար պէտք է նկատել, որ նա աւելի կոչված է երիտասարդական դերեր կատարելու, և պէտք է ցաւել, որ Րօբէրտի դերը նա չէր ստանձնել: Օրիորդ Վարդինթերի բեմական ընդունակութիւնները կասկածից դուրս են, բայց նրա այս անգամվայ խաղը սպասածի պէս չանցաւ: Շարժմունքների մէջ նկատվում էր յայտնի չափով նուրբ խաղ, բայց ձայնի մէջ և դէմքի վրա չէր նկատվում ներդաշնակութիւն շարժմունքների հետ: Ձայնը նուազ էր, չենք կարծում, որ դա բնական անուղղելի պակասութիւն լինի: Խաղի մէջ՝ ձայնի և դէմքի արտայայտութիւնների վերաբերմամբ օրիորդը անելիք ունի: Ժամանակի սղութեան պատճառով չենք կարող կանգ առնել խաղի վրա երկար, թէև այդ մեր ցանկութիւնն էր: Մնացած դերասանների դերերը, բացի տիկ. Մելիքեանի, փոքր էին և պատասխանատու—բնաւորոչ չէին. տիկին Մելիքեանի խաղի մասին վերապահում ենք մեր կարծիքը: Այդ դերասանուհուն մենք առաջին անգամ ենք տեսնում մեր բեմի վրա և կարծում ենք, որ այլ դերերում աւելի աջող լինի: Տիկին Աւետեան և պ. Արաքսեան թէև աննշան դերեր ունէին, բայց աննշան դերերի մէջ կրկին արտացոլում էին բեմական շնորք, թէ որ աստիճանի՝ կարծիք յայտնելու համար կը սպասենք աւելի պատասխանատու դերերի: Համբաւաւոր կօմիկ պ. Թուրեան այս անգամ աննշան դեր ունէր. նրա մասին ես գրելը վերապահում ենք պատշաճ դէպքի: «Պատւից» յետոյ խաղացին «200,000» վօդևիլը:

Ս.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

Հոկտեմբերի 20-ին

Հոկտեմբերի 19-ին, Ակմբանոցի դահլիճում կայացաւ երգիչ Կոստանեանի կօնցերտը, որի մասին շատերը չը գիտէին, ուստի և դահլիճը կիսով չափ դատարկ էր: Պ. Կոստանեան շատ գեղեցիկ և զգացված է երգում, ձայնը բաւականին ուժեղ է, բայց գլխաւորը՝ ախորժելի, արտասանում է խօսքերը, ինչպէս կատարեալ արտիստ: Դուք ոչ թէ միայն լսում էք նրա ձայնը, ոչ թէ միայն հասկանում էք բոլոր բառերը, այլ և տեսնում էք մի ուժեղ զգացմունք: Մեծ տպաւորութիւն թողեց՝ նրա երգած «Կռունկը». վերջին խօսքերը՝ «Կռունկ մեր աշխարհէն դէհ գնա հեռացիր» նա երգեց հրաշալի:

Վերադառնանք մի քանի խօսքով Նոր-Նախիջևանի պատմութեանը: «Մշակի» ընթերցողները յիշում են, ի հարկէ, բարերար Նիկողայոս Աճեմեանի կտակը, այն խոշոր և մեծ գումարները, որ երջանկայիշատակ ազգասէրը նուիրել է ազգային խորանին. յիշում են, ի հարկէ, և հանգուցեալի կտակակատարներին, որոնք կանկան են պարել և պարում այդ խորանի չուրջը: Կտակակատարներից մէկը վախճանվեց և կտակի 14-րդ յօդուածի հիման վրա՝ քաղաքային վարչութիւնը ընտրեց երրորդ կտակատար: Առաջարկվեցին 1 ձայնով պ. Կ. Խաղամեան, երկերկու ձայներով պ. Կ. Շլթեան և Պ. Խաթրանեան և 19 ձայներով Գր. Չալխուշեան, և այս վերջինս ընտրվեց: Ընտրութիւնից յետոյ ոտքի կանգնեց ձայնաւոր պ. Մ. Խլճեան և շնորհաւորելով ընտրութիւնը, յոյս յայտնեց, որ նոր ընտրվածը վերջ կը դնի կտակակատարների խաղերին և վերջապէս կիրագործվի Նիկողայոս Աճեմեանի միտքը ու կը բացվի հայոց Աճեմեան տեխնիկական վարժարանը:

Յայտնի է, որ Րաֆայէլ Պատկանեանի մահարձանի գումարը հասել էր 1346 ր. 60 կ. և մի տարով դրված էր Նոր-Նախիջևանի քաղաքային բանկը՝ 5%, հոկտեմբերի 16-ից: Հոկտեմբերի 17-ին մենք ստացանք տոկոսները և նորից դըրինք մէկ տարով նոյն բանկի մէջ, 5%-ով: Գումարը այժմ 1410 րուբլի է: Ու այժմ մահարձանի իրագործելը մենք յետաձգում ենք, ժամանակը անաջող է: Միւս կողմից հաւատացած ենք, որ կը ստանանք նոր նուէրներ:

Գր. Չալխուշեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք արդէն հաղորդեցինք, որ Թիւրքաց կառավարութիւնը արգելել է գործածել «հայ որբեր», կամ «որբանոց» բառերը, այլ պէտք է գործածվի «հայ աղքատներ», «աղքատանոց»: Այժմ այդ տեղեկութիւնը հաստատում են մայրաքաղաքի ռուսաց լրագիրները, քաղելով գերմանական լրագիրներից: Այդ մասին, ինչպէս երևում է, Բ. Դուռը պաշտօնական կարգադրութիւն է ուղարկել Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին:

—

Թիֆլիսի քաղաքագլխի ընտրութեան մասին երկար խօսում է ռուս յայտնի ֆելիետօնիստ Բուկվա «Новости» լրագրի հոկտեմբերի 22-ի համարում: Խօսելով երկու թեկնածուների, այն է՝ Եւանգուլօվի և իշխան Թումանօվի մասին, և պախարակելով վերջինի անտեղի հրաժարականը, պ. Բուկվա ահա ինչպէս է նկարում 4 ձայնով քաղաքագլուխ ընտրված Գէորգ Եւանգուլօվին. «Նոյն իսկ բիլիարդի խաղ չը կայ գնդակների այդքան քանակութեամբ. ամենափոքր խաղը՝ «հինգ գնդակի» խաղն է: Պ. Եւանգուլօվ համարձակ կարող է վերագրել իրան յայտնի խօսքերը. «մի այսպիսի յաղթութիւն ես՝ և ես չեմ դիմանայ իմ ջարդվելուն»: Նրա հետ հէնց առաջին անգամից մի ծիծաղաշարժ կուրիօզ պատահեց: Քաղաքագլխի ընտրութեան միւս օրը «Кавказъ» լրագիրը իբրև հաստատ լուր հաղորդեց, որ պ. Եւանգուլօվ յայտնել է, որ ինքը հրաժարվում է քաղաքագլխի պաշտօնից: Այդ լուրը Թիֆլիսում ոչ ոքին չը զարմացրեց: Նա միայն Թիֆլիսի նոր քաղաքագլխի մասին մի լաւ յանձնարարական դարձաւ: Ամենքի համար պարզ էր, որ շատ դժուար, շատ խախուտ և անհանգիստ մի բան է անցնել մի հաւաքական հասարակութեան կամ հիմնարկութեան գլուխ, ունենալով օպօզիցիայի դէմ այնպիսի անէկդօտական առաւելութիւն, որպէս է չորս ձայնը: Այդ չորս ձայնը պէտք էր գծվել ինչպէս ծծկեր երեխաների: Հակառակ դէպքում, ժողովը ամեն բանի մէջ կը ջարդէ իր ընտրածին և այսպէս անուանված՝ «հասարակական լիազօրութիւնները» կը դառնան մի զուարճալի առասպել: Բայց միւս օրը ինքը պ. Եւանգուլօվ շտապեց հերքել «Кавказъ» լրագրի հաղորդած չափազանց և շատ չափազանց ճշմարտանման ու նոյնքան էլ բնական լուրը: Նա ասեց, թէ «չէ ունեցել և չունի դիտաւորութիւն բաւարարութիւն տալ այն մարդկանց ցանկութեան, որոնք, չը քաշվելով ամեն տեսակ (sic) միջոցներից, ոչ սուտից, ոչ բամբասանքից, ոչ ինսինուացիայից, աչք են դրել (?!) նրա հրաժարականին:» Կարծես թէ այնքան շատ բան է հարկաւոր ենթադրելու համար, թէ իշխան Թումանօվ, դառնալով Թիֆլիսի քաղաքագլուխ, վատ չէր լինի փաստաբան Եւանգուլօվից: Կատարեալ Բիսմարկ «Գիլօրգօվիա նօմերա» հիւրանոցից: Նրան ուզում են գլորել, բայց նա կը բարձրանայ ինչպէս մի ժայռ, որ հաստատված է չորս ընկոյզների վրա:» Խեղճ Եւանգուլօվ...

—

Մեզ հաղորդում են, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը՝ նորից դիմում է արել Կաթողիկոսին, թոյլտւութիւն խնդրելով դպրոցի համար նոր շինութիւն կառուցանել Վանքի մօտ գտնված հողի վրա: Ինչպէս յայտնի է, երկու տարի առաջ Կաթողիկոսը թոյլ չը տուեց նոր շինութիւն սկսել Նաբերեժնայա փողոցի վրա: Կարծում ենք, որ Վանքի մօտ գտնվող տեղը այնքան անյարմար է, գլխաւորապէս սանիտարական կողմից, որ հոգաբարձութիւնը պէտք է հեռու մնայ մի այդպիսի սխալ անելուց:

—

Թիֆլիսի դումայի ֆինանսական յանձնաժողովի նախագահ է ընտրված Միքայէլ Թամամշեւ:

—

Մի քանի օրից յետոյ, նոյեմբերի սկզբին տեղի կունենայ կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան հանդիսաւոր տարեկան նիստը: Այդ նիստում, ի միջի այլոց, Վ. Գեևսկի կը կարդայ մի զեկուցում խաղողի հիւանդութիւնների մասին, իսկ Ի. Ֆիգուրօվսկի՝ մի ուրիշ զեկուցում՝ հեղեղների մասին:

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են. «Դպրոցների փակումից յետոյ՝ առաջին անգամ, հոկտեմբերի 12-ին, և երկրորդ անգամ՝ 19-ին, իգդիրցիները բաղդ ունեցան վերջապէս ներկայացման երես տեսնել, շնորհիւ տիկին և պարոն Սողոմոնեան դերասանների, որոնք Իգդիր գալով՝ երկու ներկայացում տուեցին տեղական սիրողների մասնակցութեամբ: Առաջին անգամ խաղացին Պարոնեանի «Մեծապատիւ մուրացկանները» ու «Մըգիճի հարսանիքը», իսկ երկրորդ անգամ «Ասլան բալասի» և «Պատւը հանաք է անում». Թէ առաջին և թէ երկրորդ ներկայացումն էլ լաւ անցան. սիրողներն իրանց կարողութեան չափ կատարեցին իրանց յանձն առած դերերը: Դերասան ամուսինների համար կասենք, որ բաւականին լաւ են կատարում կօմիքական դերեր, մանաւանդ պարոնը: Երկու ներկայացումից էլ մնացած արդիւնքը բաւարար էր»:

—

ՇՈՒԼԱՎԵՐԻՑ մեզ գրում են. «Մեր հասարակութիւնը նորերս, միաձայն, աւանի տանուտէր ընտրեց մեր երիտասարդներից մէկին՝ պ. Վախտանգ Մեհրաբեանին: Նորընտիր տանուտէրը պաշտօնը ստանձնեց խուռն բազմութեան ներկայութեամբ և համառօտ ու պարզ կերպով յիշելով իր դէպի հասարակութիւնը՝ նոյնպէս և հասարակութեան դէպի տանուտէրի կարգադրութիւնները ունեցած պարտաւորութիւնները, խոստացաւ անաչառ լինել իր գործունէութեան մէջ: Աւանի թէ տանուտէրը և թէ դատաւորները եռանդուն երիտասարդներից լինելով, յուսով ենք կարգաւորեցնեն այն հաւասը, որով հասարակութիւնը վերաբերվում է դէպի իր երիտասարդ անդամները:»

—

ՄՕԶԴՕԿԻՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի 17-ին նշանակված էր քաղաքային ձայնաւորների ընտրութիւն: Ընտրվեցին՝ Ց. Անդրէևիչ, Ս. Ալադաթօվ (ներկայ քաղաքագլուխ), Սերովբէ Գանջումեան, Ց. Մէլքումեան, Ա. Ջաշխեան, Ս. Մէլքումեան, Ց. Կօժեմեիկեան, Պ. Պետրօվ, Մ. Բօգդանօվ, Կ. Շիլաօվ, Գ. Ցոլակեան, Ց. Գանջումեան, Գ. Ղամուկեան, Մ. Կօժեմեիկեան, Ց. Էխինջարեան, Գ. Լխիցեան, Պ. Գանջումեան, Ա. Մեղնիկօվ, Գ. Կակլօվ, Ի. Մեղվեդեվ, Ս. Գանջումեան, Ա. Արեշեվ, Գ. Բաղդասարօվ, Գ. Սեդօվ, Ց. Եւանգուլեան, Ա. Դաւիդօվ, Կ. Կարախանօվ, Կ. Նաւասարդեան, Խ. Գանջումեան և Գ. Ալանեան»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլսից հեռագրում են. «Վերջին ունկնդրութեան ժամանակ սուլթանը իր դժգոհութիւնը յայտնեց հայոց պատրիարքին այն բանի առթիւ, որ նա, պատրիարքը, թոյլ է տալիս օտարահպատակներին՝ յանձն առնել հայ որբերի հոգատարութիւնը և ասաց, որ եթէ հայերը իրանք չեն կարող հոգ տանել իրանց որբերի մասին, այն ժամանակ ինքն, սուլթանը, որպէս բոլոր որբերի հայր իր պետութեան մէջ, կը հրամայէ, որ մահմետական գթասրտութիւնը հոգ տանի այդ թշուառների մասին: Թիւրքաց իշխանութիւնները դէմ են այն բանին, որ օտարականները ապաստարաններ հիմնեն: Շվէյցարական մի պաստօրին, որ գնում էր Թիւրքիա որբեր խնամելու, չը թոյլ տուեցին Սիվասից հեռու գնալ և դուրս քշեցին Թիւրքաց կայսրութեան սահմաններից: Սուլթանը առհասարակ աշխատում է աքսորել բոլոր միսիօնարներին: Եթէ այդ նրան աջողվի, այն ժամանակ բոլոր ապաստարանները կը փակվեն. այլ ևս կոտորածների և ամեն տեսակ անարգարութեան վկաներ չեն լինի, և ուրեմն անհնարին կը լինի օգնել թըշուառներին»:

—

«Daily Chronicle» լրագիրը պնդում է, որ հայերին չեն թոյլ տալիս մի քաղաքից միւս քաղաքը անցնել, նրանց չեն թոյլ տալիս ոչ Թիւրքիա գալ, ոչ էլ դուրս գալ այնտեղից: Նըրանից, որոնք կոտորածների ժամանակ փախան Եգիպտոս և որոնք այնտեղ գործ չը գտնելով՝ վերադառնում են Թիւրքիա, յետ են ուղարկւում Եգիպտոս, իսկ նրանք, որոնց աջողվում է Կ. Պոլիս մտնել, բանտն են նստացնում: Կ. Պոլսի մօտ գտնվող քաղաքների մանր վաճառականներին թոյլ չեն տալիս գալ մայրաքաղաքը ապրանք գնելու կամ առևտրական որ և է գործողութիւն կատարելու համար: Անցեալ տարի այդ բանը կարող էին կատարել նրանց կանայք, բայց այժմ մինչև անգամ կանայք չեն կարող Կ. Պոլիս գալ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԵՐ

(Թղթակցութիւն „Русск. Вѣдомости“-ի Կ. Պոլսից)

«Այժմ այստեղ պիտի հաւաքվեն երիտասարդ Թիւրք կուսակցութեան բոլոր գլխաւոր ներկայացուցիչները, որոնք գտնվում էին արտասահմանում: Այդ մոլորված հոգիները «որսող» Ահմէդ-Ջէլալէդդին փաշա ահա երկու շաբաթ է ինչ վերադարձել է Կ. Պոլիս: Չը գիտեմ, ծախսել է նա այն 10,000 ոսկին, որ այդ նպատակի համար տուել է նրան սուլթանը, բայց իր յանձնարարութիւնը նա յամենայն դէպս կատարել է աջողութեամբ: Կուսակցութեան նշանաւոր անդամները, պարագլուխները այժմ այստեղ են: Նրանց մէջ է հռչակաւոր Նազըլ-խանում, եգիպտական խըդիվի մօտիկ ազգականը, Թիւրքիայի կանանց ազատութեան պաշտպանը: Ասում են, որ սուլթանը նրան առանձին ունկընդրութիւն կը շնորհէ և այդ ժամանակ Նազլի խանումը մտադիր է պարզել իր ծրագիրը Թիւրք կանանց հարէմական բանտարկութիւնից և աւելի երեսաքօղից ազատելու մասին: Ըստ երևոյթին, սուլթանը կամենում է ինչպէս և լինի ազատվել այս՝ նրա համար անյարմար և չափազանց ազդեցիկ կուսակցութիւնից: Դրա համար երկու տեսակ միջոցներ են գործ ածվում: Մանր մունր անդամներին կալանաւորում են, բանտ նստացնում, աքսորում են Տրիպօլիս և այլ տեղեր, իսկ պարագլուխներին և ազդեցիկ մարդկանց շոյում են, պարգևներ են տալիս, լաւ և տաք տեղեր են յանձնում: Այսպէս, իշխանուհի Նազլիին սուլթանը մտադիր է տալ իր պալատներից մէկը՝ նրա բոլոր սարք ու զարդերով և ծառաների թիւով. Մուրադ բէկին, բացի այն 10,000 ֆրանկից, որ նա ստացել է Ջէլալէդդին փաշայից, նշանակված է ամսական ռոճիկ 50 ոսկի (մօտ 450 րուբլի). Րիզա-բէյ և Ֆերիդ-բէյ, որոնք նոյնպէս ազդեցիկ մարդիկ են կուսակցութեան մէջ, նշանակված են դեսպանական քարտուղար՝ մէկը Գահիրէ, միւսը—Վաշինգտօն: Համարեա ամեն օր այսպիսի պաշտօններ են տրվում»:

ԳԻ ԴԸ-ՄՕՊԱՍԱՆԻ ԱՐՁԱՆԸ

Հոկտեմբերի 12-ին Պարիզում հանդիսաւոր կերպով բացվեց ֆրանսիացի հռչակաւոր վիպագրող Գի դը-Մօպասանի արձանը: Մօպասան հռչակաւոր Ֆլօբէրի աշակերտ է. նրա տաղանդաւոր պատմուածքները, վէպիկները սաղծել են նրա համար մի փառք, որ տիրում է աշխարհի բոլոր ծայրերում: Էմիլ Զօլա, ֆրանսիական վիպագրութեան այժմեան կենդանի հսկան, ներկայ էր արձանի բացման և մի վերին աստիճանի ազդու և գեղեցիկ ճառ ասաց: Նա յայտնեց որ թէև Մօպասան դժբախտ վախճան ունեցաւ, թէև մեռաւ խելագարութեան մէջ, բայց և այնպէս նրա երջանկութիւնը սկսվեց մահից յետոյ: Մինչդեռ Հիւգօ, Բալզակ, Ֆլօբէր և ուրիշ երևելի գրողներ դեռ արձաններ չունեն, Մօպասանը, որ ամենքից կրտսերն էր, արժանացաւ այդ փառքին: Զօլա այսպէս վերջացրեց իր ճառը. «Թանգագին Մօպասան, իմ կրտսեր եղբայր, որին ես սիրում էի, որի հասակ առնելը ես դիտում էի եղբայրական ուրախութեամբ, քո բոլոր անձնուէր, հաւատարիմ բարեկամների անունից ես ծափահարում եմ քո մուտքը փառքի մէջ: Եթէ մեր մեծ և բարի Ֆլօբէր կարողանար ներկայ լինել այս հանդէսին, որպիսի հպարտութեամբ կը լցվէր նրա սիրտը, տեսնելով թէ ինչպէս մենք արժանի պատիւներ ենք անում նրան, որին նա անուանում էր իր գրականական որդի: Բայց նրա ստուերը այստեղ է, և մենք ամենքս այստեղ հիացած ենք քեզանով, սիրում ենք քեզ, ողջունում ենք քո անմահութիւնը»:

Արձանը կանգնեցրել է գրականագէտների ընկերութիւնը և ներկայացնում է աթոռի վրա նստած մի կին, որ մտածութեան մէջ է. նրա միւս ձեռքում երևում է մի գիրք: Կնոջ կողքին բարձրանում է Մօպասանի կիսարձանը, որ նրա բարեկամների ասելով, շատ նման է նրան:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, նոյեմբերի 12-ին

Անշուշտ ազգային լուրերու կը սպասէք, ես ալ կը մտածեմ թէ ինչ գրեմ... Ժամանակ մը օրերու խնդիրով կը զբաղէինք, հիմա անոնք, ինչպէս գրած էի արդէն, որբութենէ ի չքաւորութիւն դարձան, վաղը, միւս օր ալ բոլորովին «չիք» պիտի դառնան, «voilà tout».

Շատ կարևոր լուր մը կայ՝ որ եթէ կը հաճիք, ազգային յառաջդիմութեան գլխաւոր ապացոյց կրնայ նկատուիլ, այն է Օրմանեան պատրիարքին վեց վարդապետներու ծայրագոյն իշխանութիւն տալը՝ զոր «Բիւզանդիոն» համով հոտով և բերնին ջուրերը վազելով նկարագրեր էր: Այդ վարդապետներն Արմաշու Դպրեվանքէն ելած են, 25—27 տարեկան ծաղիկ հասակնուն մէջ ծաղկեայ փիլօն առան այն ձեռքէն՝ որ զիրենք օծեր էր, հիմա պիտի երթան ինքնագլուխ գաւառները հովուելու... Միթէ ասիկայ պզտիկ յառաջդիմութիւն կը նկատէք... Եթէ բաղդը բերէ, ասոնց գլուխներուն վրա մէկ մէկ ադամանդ ալ թառի, ինչպէս իջեր էր հրաշիւք իմն Դուրեան վարդապետի վրա, այն ատեն ազգը պատրիարքցու փնտռելու ալ պէտք չը պիտի ունենայ: Թէև ազգային թերթ մը, անուշադրութեամբ թերևս, ըսած էր թէ «Արմաշէն ելած պատրիարքներն ազգին գլխուն փորձանք կը դառնան», սակայն ասոնք մինչև այն ատեն Արմաշը բոլորովին մոռցած կը լինին, ապահով եղէք...

Ուրիշ լուր մալ, ոչ նուաղ կարևոր:

Ինչպէս որ եկեղեցւոյ մէջ մեծ քարոզիչները ծայրագոյն աստիճան կընդունին և ծայրագոյն վարդապետ կը կոչուին, յետ այսորիկ՝ այն քահանաներն ալ՝ որ եկեղեցւոյ մէջ քարոզ կըրնան տալ՝ մագիստրոս աստիճանը պիտի ընդունին և պիտի կոչուին մագիստրոս—քահանայ, օրինակի համար, տ. Յովհաննէս Ասար-խաչակիր—մագիստրոս-քահանայ այսինչեան: Բառ մալ սարկաւագներուն. «տիրացուն» լաւ չի հնչեր ականջի...:

Գիրակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պօլսից ստացված տեղեկութիւններից երևում է, որ Սիրիայում նորից անկարգութիւններ են սկսված:

—Բրիւսէլում արգելված է երիտասարդ թիւրքերի «Մէշվէրէթ» լրագիրը սուլթանին վիրաւորելու համար: Այդ լրագիրը առաջ հրատարակվում էր Պարիզում, բայց թիւրքաց դեսպանի պահանջի համեմատ, այնտեղ արգելվեց և անցաւ Բրիւսէլ:

—«Standard» լրագիրը ստացել մի յօդուած, որի մէջ պատմում է, թէ ինչպէս անգլիացիները հալածվում են Թիւրքիայում: Բ. Դրան կապած պայմանագիրները անգլիացիների հետ լուծվում են վերջիններից և տրվում են գերմանացիներին: Կ. Պօլսի բարձրաստիճան պաշտօնեաները թիւրքահպատակներին խորհուրդներ են տալիս առևտրական գործեր չը վարել անգլիացիների հետ: Դաշնագիրների հակառակ, անգլիական շատ ապրանքների մուտքը Թիւրքիա արգելվեց: Անգլիացի վաճառականները պատրաստվում են խումբ խումբ հեռանալ Թիւրքիայից:

—Բ. Դուռը ուշադրութիւն դարձրեց Դարդանէլի պաշտպանութեան վրա: Մի յատուկ յանձնաժողով տորպէդները պայթեցնելով է զբաղվում այստեղ: «Իգդամ» լրագրի խօսքով, փորձերը շատ գոհացուցիչ հետևանքներ են տալիս, և երևում է, որ տորպէդների օգնութեամբ կարելի է օդը թռցնել ամենամեծ զրահակիր նաւ: Այդ միջոցները, ակներև, ձեռք են առնվում միմիայն Անգլիայի դէմ, որովհետև Բօսֆօրի պաշտպանութեան վրա այդպիսի ուշադրութիւն չէ դարձնվում:

—Յունաստանի ներքին խառնակութիւնների առիթով «Nord» լրագիրը գրում է. «Յունաստանը բաւական, կարելի է ասել՝ խիստ պատժվեց այն բանի համար, որ նա հրաժարվեց ենթարկվել մեծ պետութիւնների խորհրդին և Դէլիանիսի մինիստրութեան յիմարութեան շնորհիւ, պատերազմ սկսեց Թիւրքիայի դէմ: Պէտք է յուսալ, որ նա իր թշուառութիւնների բաժը չի ծանրացնի և չի լսի «Էտնիկա Հէտէրիայի» դաւաճան խորհուրդներին, որը քարոզում է գահընկէց անել թագաւորին և հելլէնական հանրապետութիւն հրատարակել: Եթէ Յունաստանը մի այդպիսի քայլ անի, Եւրոպան այն ժամանակ կը թողնի Յունաստանը իր տխուր ճակատագրի կամքին և ոչ մի պետութիւն չի միջամտի փրկելու նրան, ինչպէս նա վարվեց յոյն-թիւրքական պատերազմի ժամանակ»:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՑԵՏԻՆԻԷ, 25 նոյեմբերի: Միրդիտների շրջանի զայմագամը և ալբանական մի քանի ուրիշ աւագներ Դիարբէքիր աքսորվեցին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 նոյեմբերի: Թագաւոր Կայսրը առևտրի և մանուֆակտուրի խորհրդի անդամ իշխան Վիաչէսլաւ Տէնիշէվին նշանակեց 1900 թւի համաշխարհային ցուցահանդէսի ռուսաց բաժնի ընդհանուր կօմիսար Պարիզում:

Նոյեմբերի 25-ին, Չայկօվսկու մահվան օրը, նրա գերեզմանի վրա Ալէքսանդրնեվսկի մենաստանում բացվեց արձան: Հանդէսին ներկայ էին երաժշտական աշխարհի աչքի ընկնող անձինք:

Կ. ՊՕԼԻՍ, 26 նոյեմբերի: Խաղաղութեան կօնֆէրէնցիայի նիստում մինչև այժմ անլծիւ մնացած կէտերը լուծումն ստացան: 3-րդ յօդուածի և մասնաւոր անձանց վարձատրութեան վերաբերեալ տարաձայնութիւնը դեռ ևս շարունակվում է: Յունաց պատուիրակները բողոքեցին նաւագնացութեան արգելքների դէմ, որոնցով խախտվում է 7-դ յօդուածը: Արտաքին գործերի մինիստրը ընդունեց բողոքը: Այն տեղեկութիւնը, թէ սահմանորոշ յանձնաժողովը յանձնեց Նէզէբաղ Թիւրքիային, ճիշդ չէ. մեծամասնութիւնը այն կարծիքը յայտնեց, թէ այդ կէտը պէտք է թողնել Յունաստանին:

ԼՕՆԴՕՆ, 26 նոյեմբերի: «Times» լրագրին Կ. Պօլսից հեռագրում են, որ մինիստրական դեկուցման մէջ սուլթանին՝ հաւանութիւն է տրվում ֆինանսական վարչութեան վերակազմութեան ծրագրին, որ կազմված է սուլթանի հրամանով: Զեկուցմանը կցված է մի առաջարկութիւն, որպէս զի այդ ծրագրի իրագործումը թողնվի այն յանձնաժողովին, որի մէջ կը մտնեն օսմանեան պարտքի վարչութեան ֆրանսիական և անգլիական պատուիրակները և օսմանեան բանկի դիրեկտորը: «Բէյօղլի գործակալութիւնը» լսել է, որ վաղաժամ է այն լուրը, թէ յունաց փոխատուութիւնը երաշխաւորել են Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը. վերոյիշեալ պետութիւնների մէջ մինչև այժմ այդ մասով ոչինչ համաձայնութիւն չէ կայացած:

ՌԻՕ-ԴԷ-ԺԱՆԷՅՐՕ, 26 նոյեմբերի: Մի զինուոր հրացան արձակեց նախագահ Մօրէսի վրա. շրջապատողները արգելք եղան այդ յանցաւոր փորձին. այդ ժամանակ մինիստր Բիանկուր սպանվեց. նախագահի եղբօրորդի գնդապետ Մօրէս թեթև վիրաւորված է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 նոյեմբերի: Նոյեմբերի 26-ին հանդիսաւոր կերպով բացվեց հռչակաւոր վիրաբոյժ Պիրոգովի անուան թանգարանը:

ՄԷՅԴԱՆ, 27 նոյեմբերի: Այստեղ եկաւ օրակզաների ցեղի պատգամաւորութիւնը բանակցելու՝ հնազանդութիւն յայտնելու պայմանների մասին:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Նոյեմբերի 24-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ ստեռլ. .	93 ր.	45 կ.
Բեռլինի վրա 100 մարկ — .	45 »	$77^{1}/_{2}$ »
Պարիզի վրա 100 ֆրանկ — .	37 »	20 »
Ոսկի — — — .	— »	— »
Մաքսային կուպօններ — .	149 »	— »
Բօրսային զինկօնտ — .	5 »	$6^{1}/_{2}$% »
4% պետական ռէնտա . . .	$98^{1}/_{8}$ »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	290 »	— »
— — երկրորդ — .	249 »	— »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի.	$204^{1}/_{2}$ »	— »
5% պետական երկաթուղ. ռէնտա.	— »	— »
4% ներքին փոխառութեան . .	$98^{3}/_{8}$ »	— »
$4^{1}/_{2}$% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	$100^{3}/_{8}$ »	— »
Ազն. կալ. պետ. բանկի խաղարկ.	— »	— »
$4^{1}/_{2}$% վկայակ. գիւղ. հող. բանկի	101 »	— »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. .	— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաներ .	$100^{7}/_{8}$ »	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	$101^{1}/_{4}$ »	— »
Օդէսայի — — .	100 »	— »
Թիֆլիսի — — .	99 »	— »
Թիֆլիսի կալ. բանկի 6% — .	$100^{1}/_{4}$ »	— »
5% — — — .	$99^{1}/_{4}$ »	— »
Քութայիսի 6% — — .	$100^{1}/_{2}$ »	— »
5% — — — .	$99^{1}/_{4}$ »	— »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

13,000 րուբլի բանկի պարտքով ծախվում է ՏՈՒՆ, ֆլիգելով, երեքյարկանի և այգով. գետինը 218 քառ. սաժէն: Հասցէն՝ Անդրէևսկայա փողոց, № 4: (№ 122) 3—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԻՒՐԻՑ ՎԵՍԵԼՕՎՍԿՈՒ
„СТИХОТВОРНЫЕ ПЕРЕВОДЫ“

Ժողովածուի առաջին գրքոյկը, որի մեծ մասը բռնում են Շահազիզեանի, Դուրեանի, Պատկանեանի, Յովհաննիսեանի և Լեւենցի բանաստեղծութիւնները:

ԳԻՆԸ 50 ԿՈՊԷԿ

Թարգմանչի հասցէն՝ МОСКВА, Чистопрудный бульваръ, д. Балашова. (№ 125) 1—5

Շուտով լոյս կը տեսնի
ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑ
(Տասներորդ տարի)

Գինը փոխանակ 60-ի՝ 50 կոպէկ: Դիմել՝ Թիֆլիս, հրատարակիչ Գիւտ ա. քահ. Աղանեանցին: (№ 115—հ. չ.) 6—10

Առանձին գրքով լոյս տեսած
ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ձեռք բերել ցանկացողները պէտք է դիմեն հեղինակին հետևեալ հասցէով՝ НАХИЧЕВАНЬ На Дону. Ервандy Шахъ-Азизъ. Գինը 60 կ., ծանրոցով 70 կ.: (№ 124) 3—4

ԱԼԻԽՐԱՂԱՑՆԵՐ } ԳՈՒԼՈՐՇՈՒ ՋՐԻ և ՁԻԱՔԱՐՇ

Պատրաստում է, ինչպէս մասնագիտութիւն, ԻՆԺԵՆԵՐՆԵՐ
ԵԱՐԱԼՕՎԻ և ԱԼԻԽԱՆՕՎԻ
Գործարանը, Թիֆլիսում, Ալէքսանդրեան փողոց, սեփական տուն:
(№ 102) 19—0

ԵՂԲ. ՍՏԵՓԱՆԵԱՆՑՆԵՐԻ

1880 թւից Բաքու քաղաքում գոյութիւն ունեցող «ԲԱՂՑՐԱՒԵՆԻՆԵՐԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ», որ գտնվում էր Օլգինսկայա փողոց, Բ. Լալայեանցի տ., և որ անցեալ 1896 թ. ապրիլ ամսում պատահար հրդեհից այրվեց,

ԱՅԺՄ ՆՈՐԻՑ ԲԱՑՎԵԼ Է նոյեմբեր ամսից նոյն Օլգինսկայա փողոցի վրա, ՇԱՀԴԻԴԱՆԵԱՆՑԻ պասաժում, №№ 2 և 3, հետևեալ ֆիրմայով.

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ ՔԱՂՑՐԱՒԵՆԻՆԵՐԻ
ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԳԷՈՐԳԵԱՆՑԻ
(CONFISERIE CENTRALE)

Գործարանը ընդունում է ամեն տեսակ քաղցրաւենիների պատուէրներ և կատարում է բոլորը թարմ նիւթերից և ամենայն բարեխղճութեամբ: Բացի դրանից, խանութում ամեն օր կարելի է ստանալ պատրաստի զանազան թարմ քաղցրաւենիք և խմորեղէն: Խանութն ունի առանձին կահաւորած սենեակ, որտեղ կարելի է ստանալ թէյ, սուրճ, չօկօլադ, կակաօ և զանազան զովացուցիչ խմիչքներ: (№ 122) 3—6

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ և ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 29 նոյեմբերի (10 նոյեմբ.) ՍԻՐԿԱՍԻ շոգենաւը, նաւապետ ԳԱՐՐԻԳ: Եւ այդպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամի 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ՚Արնօին, Նարիշկինսկայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարսեղեանին, Սիօնի փող. նախկին Արծրունու քարվանսարա: ԲԱԳՈՒ—պ. Ս. Գիւլզարեանին, Կօլիւբեաքինսկայա հրապարակ: ՆՕՎՈՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիոր Հերշենրօդերին: (№ 76) 4—20

ԿՏԱՒԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ
(Բամբակի մանուածքի)


АЛЕКСАНДРЪ III ИМПЕРАТ. И САМОД. ВСЕРОСС.

ԺԱՌԱՆԳՈՒՀԻՆԵՐԻ Յ. ՉԻԹԱՒԵԱՆԻ
(Հիմնված է 1869 թ.)
ԳՈՐԾԱՐԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

КАВКАЗСКАЯ ВЫСТАВКА СЕЛЬСК. ХОЗЯЙСТВА И ПРОМЫШЛЕННОСТИ 1889.

ԿՏԱՒ ՍՈՎՈՐԱԿԱՆ 15—30 ՎԵՐՇՕԿ ԼԱՅՆՈՒԹԵԱՄԲ
ԿՏԱՒ I ՏԵՍԱԿԻ 15—30 » »
ԿՏԱՒ ՀԱՍՏ » 12—30 » » (մասնաւոր պատուէրներով)

ԹԵԼ ԿԾԻԿՆԵՐՈՎ,
ԹՈՅԼ ԲԱՄԲԱԿԻ ԹԵԼԻՑ ¼″—3″ ՀԱՍՏՈՒԹԵԱՄԲ
ԹԵԼԻ ԾԱՅՐԵՐ (пакля) ՄԵՔԵՆԱՆԵՐ ՄԱՔՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

ԲԱՄԲԱԿ ՄԱՔՐԱԾ (вата) I ՏԵՍԱԿԻ
ԲԱՄԲԱԿ ՄԱՔՐԱԾ II »
ԲԱՄԲԱԿ ԹԵՐԹԵՐՈՎ I ՍՈՍԻՆՁՈՎ (մասնաւոր պատուէրներով)
ԲԱՄԲԱԿ ԹԵՐԹԵՐՈՎ II » ՆՇՇՏՈՎ

Առաջարկում ենք պ.պ. վաճառականներին և գործածողներին ուշադրութիւն դարձնել մեր գործարանում պատրաստված կտաւի ամրութեան և ներկեր ընդունելու յատկութեան վրա և չը շփոթել Ռուսաստանից եկած կտաւների հետ:

Կտաւի նմուշները և պրէյսկուրանտները ուղարկվում են ըստ առաջին պահանջման ձրիաբար:

Հասցէն՝ Тифлисъ, главная контора фабрики. Уголъ Нагорной и Сергіевской ул. собс. д. телефонъ конторы 266, а фабрики 24. (չ. ե.) (№ 78) 30—50

Дозволено цензурою, Тифлисъ, 27 Октября 1897 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.